21. ՔՅՈՍԵՆ ՈՒ ՂԱՍՊԸՆԵՐԸ

Կէղնի չի էղնի շատ խելոք Քյոսեմ կէղնի։ Էս քյոսեն մեկ օր կովըմ կուտա հորը, թե.— Տար քաղաք ծախե, հրմը,— կըսե,— լավ գնով ծախե, չլինի թե ղասպընները խաբեն քեզի։

Հերը կովն առաջը գցած քաղաք կէրթա։ Ղասպի մեկը ռաստ գուբա, կովին մուշտարի կէղնի, ու հորը կխաբե , կովը էժան կառնի։ Հերը տուն դառնալով տղին կպատմե, որ պակաս գին տվին, էժան ծախեց։ Քյոսեն կնեղենա հոր վրա, մտքին կդնե ղասպընեբեն հայիֆը[1] առնել։ Էշրմ կունենան, էշը կառնե ու կէրթա ղասպընոցը կկայնի։ Առաջուց ջերը թրիք կունենա, հանե վար կգցե ու թեզմ նորից ջերը կդնե։ Ղասպրները կտեսնին, կըսե էդոնց քովը.— Ապրի էշս, էսոր տված օսկիքն օր չէղնին, ինչո՞վ պիտի մենք ապրինք։

Ղասպընները վրա կպրծնին Քյոսին, կստիպեն օր էշը ծախե իրանց վրա։ Քյոսեն շատ նազերով չեմ ու չում էրավ, վերջը թանգ գին ուզեց։ Ղասպընեբն իրանց մեջ փարա կժողվեն, չունքի մեկը չէր կրնա գինը տալ։ Էշն օր կառնին, Քյոսին կհարցնեն, թե օսկին իրանց մեջ ինչպես բաժնեն։ Քյոսեն կըսե,— էշը մեկ ախոռ կապեցեք, դուռը վրայեն կողպեք, երթըքեն խոտը կախեք ու թողեք մեկ ամիս թրքե։ Ամսեն ետև օսկիքը ձեր մեջը բաժնեցեք։

Ղասպընները Քյոսի ըսածի պես էլ կէնեն։

Մեկ օր ղասպի մեկը երթըքեն ներս կաշե, կտեսնի օր իշու նալը

[1] Վրեժ (Ս. Բ.)։

կպլպլա։ Շտապով իմաց կուտա ընկերներին։ Ընկերները գուքան դուռը կբանան, կտեսնին որ էշը սատկել է։ Նոր գլխի գընկնին, օր Քյոսեն իրանց խաբել է։ Մտքերը կգնեն իրանք Քյոսին մորթեն։ Քյոսեն առաջուց կիմանա էնոնց մտքինը։ Քյոսեն ուներ երկու շուն. իրար շատ նման։ Շան մեկը կառնե Քյոսեն կէրթա արտը, կնկան էլ խրատ կուտա թե.— Ղասպներն օր գուքան, շան գլխին փետով ամուրըմ զարկ ու տնեն դուրս հանե։

Ղասպըները դուքան, կնիկը կըսե թե.— Արտն է գնացել մարդըս, շանը կդրկեմ կկանչեմ, շան գլխին ամուրըմ կզարկե։ Շունը կսատկի։ Քյոսեն մեկել շան հետ ներս կմտնի։ Ղասպըները էշը կմոռնան, Քյոսին կստիպեն, օր շունը ծախե։ Քյոսեն էլի չեմ չում էնելով շունը թանգ գնով կծախե։

Մեկ օր ղասպըներու ուստաբաշին մեկին կանչելու համար շան գլխին ամուր կզարկե, շունը իսկույն կսատկի։

Էս անգամ էլ ղասպըները կտեսնին օր խարված են, կվճռեն սուս ու փուս մորթել։ Քյոսեն էլի իմացած կէղնի։ Կնկա բկեն արնով թուլուղ կկապե։ Երբ օր ղասպըները դուքան, Քյոսեն կըսե.— Լավ. առաջ հաց ուտենք, ետև մորթեցեք, էսոնք կնստին հաց ուտելու։ Քյոսեն մահանա կբռնե, թե կերակուրը լավ չէ էփել, ու յանի թե հերսեն կնկան կմորթե, դանակը կնկա բուկը կքսե, թուլուղը կպատռի, արունը կը վազե։ Ղասպըներն իրար կխառնվեն։ Քյոսեն կըսե.— Դարտ միք էնե, ես ղավալ ունիմ, էնով փչեմ թե չէ, կաղնա։ Ղավալով կփչե կնկան։ Կնիկը սուտմնցա կը թապլտվի ու վեր կելնի։ Ղասպըները էս անգամ էլ վրա կպրծնին ու ղավալը թանգ գնով կառնեն։ Ղասպըները քաղաք կէրթան, կմտնին մեկ գինետուն լավ կհարբին, կսկսին կռվել ու իրար վիրավորել դանակներով։ Ղավալը կփչեն, կփչեն, ղավալը քյաֆարաթ[1] չի էնե։

Էս անգամ էլ գեղ գուքան, Քյոսին կբռնեն ու տոպրակի մեջ դնելով ծառեն կկախեն, կթողնեն օր էգսի առավոտ ջուրը գցեն։

Քյոսեն հալովըմ[2] տոպրակը կծակե, կաշե օր քրդի մեկը մեծ սյուրու օշխար առաջը խառնած կէրթա։ Քյոսեն քրդին կկանչե։ Քուրդը Քյոսին կհարցնե, թե ընչի են ծառեն կախել։ Քյոսեն կըսե։— Գուզեն ընձի զոռով թագավոր դարձնել, հըմը ես ծեր եմ, չէի կրնա թագավոր էղնի, ենոնք էլ ծառեն կախեցին։ Թե օր գուզես, արի՛ շորերդ ընձի տուր, ես հագնեմ, դու իմ շորերով տոպրակը մտիր ու թագավոր կէղնիս։

[1] Օգնություն (Ս. Բ.)։
[2] Մի կերպ (Ս. Բ.)։

Քուրդը կհաշվե՝ թադավոր դառնալը ավելի ձեռնտու է, շորերը կփոխե, մեշոքի մեջ կմտնի։ Քյոսեն էլ ոչխարները կառնի ու կէրթա։

Ղասպրները քրդին ջուրը կքցեն, մեյդան կէրթան կտեսնին որ Քյոսեն օչխարները բերել է ծախելու։ Ղասպրները կհարցնեն Քյոսին, թե ո՞ւրտից են էսքան օչխարները։

Քյոսեն կըսե.— Դուք ընձի ջուրը քցեցիք։ Ջրի մեջ կան շատ սյուրիներ, իլխիներ, նախրներ։ Էսքան օչխարն անջախ[1] բերի։

Ղասպրները կըսեն.— Էս լավ բան է, արի մեզի տար տեղը նշանց տուր։

Քյոսեն էնոնց կտանի ջրի քյանարը։ Էսոնք մեկ մեկ կշպլըղնան։ Մեկն շտապով ջուրը դընկնի ու կբլբլա։

Մեկելոնք կհարցնեն, թե.— Էդ ի՞նչ կէնե։

Քյոսեն կրսե.— Ձեզի կկանչե, շտապեցեք, սյուրիները կանցնին։

Ղասպրներն՝ իրար հետեե ջուրը կթափվին ամենքն էլ կխեղդվին։

---

[1] Հազիվ (Ս. Բ.)։